

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-23/9/Բ/2/ԻԾ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
3	<p>Մարտաբաճկոն: Մարտաբաճկոնը նախատեսված հատուկ ստորաբաժանման ծառայողների համար:</p> <p>Մարտաբաճկոնի երեսացուն պետք է բաղկացած լինի սև սինթետիկ կտորից (Кондор տեսակի, մակերեսային խտությունը՝ 1մ/ք 285 գրամ), աստառը՝ սև ցանցավոր կտորից: Մարտաբաճկոն բաղկացած է անթև շապիկի տեսքով առաջամասից և հետևամասից: Հետևամասը կազմված 1 կտորից, առաջամասը՝ 2 կտորից, որոնք առաջամասի կենտրոնում իրար միանում են շղթայով: Առաջամասը հետևամասին կողային (յուրաքանչյուր կողմում 2) և ուսային (յուրաքանչյուր կողմում 1) հատվածներում իրար միանում են մարտաբաճկոնի չափսերը մեծացնող և փոքրացնող ժապավեններով: Հետևամասում նախատեսել կաչունակով գրպան՝ թիկնոց-ուսնոցի համար և գրպանից վերև «POLICE» մակագրությամբ կտոր: Առաջամասում նախատեսել հետևյալ գրպանիկները՝ - ատրճանակ Մակարովի համար՝ ձախ կողմում, - ատրճանակ Մակարովի պահեստատուփի համար՝ ձախ կողմում, - ռադիկոյանի համար՝ ձախ կողմում, - ձեռնաշղթայի համար՝ աջ կողմում, - արցունքաբեր գազաբալոնի համար՝ աջ կողմում, - լապտերի համար՝ աջ կողմում, - 1-ին բուժ. օգնության պիտույքների համար՝ աջ կողմում - մահակի համար՝ աջ կողմում: Մարտաբաճկոնի ներքևի եզրերով նախատեսել՝ (հետևամասում 1, առաջամասում 2) սինթետիկ գոտուց բաղկացած 6 սմ լայնությամբ օղակներ՝ գոտու համար: Նմուշը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթեթավորումը՝ սովորաբար արկղերով կամ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, արկղերի (պարկերի) մեջ</p>

մինչև 20 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը : Անհրաժեշտության դեպքում, պատասխանատու ստորաբաժանման պահանջով, մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս և քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՈԶ  
ԷՍՃԱՊՁԲ-23/9/Բ/2/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
3	